

Ամերիկայի Արևելեան թեմէն ներս

Ս. ՆԵՐՍԷՍ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ «Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ»Ի ՎՈՂԸ ՕՐՆՆՈՒԵՑԱԲ ԵՒ Ս. ՅԱԿՈԲ ՄԱՏՈՒՌԻ ՎԻՄՆԱՔԱՐԵՐԸ ՕԾՈՒԵՑԱՆ

**ԼՈՆՏՈՆԱԲԱՆԱԿ ՏԻՏԻՋԵԱՆ ԸՆԴԱՆԻՔԸ 2,400,000 ՏՈՒԱՐ
ՆՈՒԻՐԵՅ**

Ս. Ներսէս Ընծայարանին համար պարմական օր մըն էր Յունիս 12-ը, երբ «Տ. Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ի հողի օրհնութիւնը կատարուեցաւ եւ Ս. Յակոբ Մարութի հիմնաքարերը օծուեցան:

Այս յիշարակելի արարողութեանց ներկայ գտնուեցան Տէր եւ Տիկին Հայկ եւ Էլզա Տիփիզեանները՝ որոնք Կեդրոնին համար նուիրեցին 1,600,000 փողար, Տիփիզեան ընտանիքի անդամներ՝ որոնք Մարութին համար նուիրեցին 800,000 փողար, եւ մօտ 150 անձեր:

Հողօրհնէքը եւ հիմնաքարերու օծումը կատարեց Հայց. Եկեղեցոյ Նիսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան:

Ս. Ներսէս Ընծայարանը հիմնուած է 1961 թուականին՝ հոգելոյս Տ. Տիրան արքեպս. Ներսոյեանի կողմէ՝ Իլլինոյզ նահանգի Էվընսթըն քաղաքին մէջ: 1971 թուականին այսօրուան կայուածը գնուեցաւ եւ ընծայարանը տեղափոխուեցաւ Նիւ Եորքի Նիւ Բոշէլ շրջանը:

Ս. Ներսէս Ընծայարանը ցարդ տուած է 35 շրջանաւարտներ, որոնցմէ 30 եկեղեցական ասպարէզ ընդգրկած են: Ընծայարանը մօտիկ յարաբերութեան մէջ եղած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ճեմարանին եւ այլ դպրեմանքերու հետ:

Թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի նախագահութեամբ՝ մասնաւոր Խնամակալութիւն մը կը հոգաւարէ Ս. Ներսէս Ընծայարանի վարչական եւ կրթական գործերը: Այժմ, ընծայարանին մէջ կը պաշտօնավարեն մասնագէտ կրթական մշակներ: Վարիչն է Հոգշ. Տոբթ. Տ. Դանիէլ վրդ. Ֆընտրքեան, իսկ ուսումնապետը՝ Տոբթ. Աբրահամ Տէրեան, եւ Հայերէն լեզուի ու պարմութեան մասնագէտ Տոբթ. Ռապրոթաւ Ըրուայն:

Քանի մը փարի առաջ Ընծայարանի ուսման ծրագիրը վերապետութեան ենթարկուեցաւ եւ որոշուեցաւ յաւելեալ դասընթացքներ աւելցնել՝ Հայերէն գրաբար եւ աշխարհագրարի լեզուի, Հայ Եկեղեցոյ պարմութեան, Հայրաբանութեան, Հայ Եկեղեցոյ ծիսագիտութեան եւ Հովուական Աստուածաբանութեան: Որոշուեցաւ շրջանաւարտութեան պայման դնել նաեւ Հայերէն լեզուի սահուն գիտութիւնը:

Ի յիշարակ երջանկայիշարակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ լոնտոնաբնակ Տէր եւ Տիկին Հայկ եւ Էլզա Տիփիզեաններ խոստացած էին Ս. Ներսէս Ընծայարանի

հողափարածքին վրայ «Տ. Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոնի» և Մատուռի կառուցման ծախսերը հոգալ:

Յարգելով իրենց խոսքումը՝ Տէր և Տիկին Տիպիգեաններ մէկ միլիոն վեց հարիւր հազար փողարի նուիրատւութիւն մը կ'աւարեցին Աստուածաբանական Կեդրոնի կառուցման համար, իսկ անոնց հարազատները՝ ութ հարիւր հազար փողարով մասնակցեցան Ս. Յակոբ Մատուռի կառուցման ծախսերուն:

Ֆիլադելֆիայէն, Նիւ Ղեմըրէն, Անգլիայէն, Գալիֆորնիայէն և Գանաւոյէն, անլի բան 150 հոգի հաւաքուած էին Ս. Ներսէս Ընծայարանի շրջափակը՝ ներկայ գտնուելու համար «Տ. Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ի հողի օրհնութեան և Ս. Յակոբ Մատուռի հիմնաքարերու օծման արարողութեանց:

Արման Աւագեան ճարտարապետն է այս նոր կեդրոնին և մատուռին: Կեդրոնը կազմուած պիտի ըլլայ մարենադարանէ մը, ուր պիտի ամփոփուին հոգեւոյս Տիրան արքեպս. Ներսոյեանի ճոխ գրադարանի գիրքերը, ինչպէս նաեւ դասախօսութեան սրահ մը, ընծայարանի սենեկաներ և գրասենեակներ: Իսկ մատուռը պիտի կոչուի Ս. Յակոբ, ի յիշատակ Տիար Հայկ Տիպիգեանի հօր:

Այս արարողութեանց ընթացքին ելոյթ ունեւորող Սրբազան Հայրը ի մասնաւորի ըսաւ. «Հայաստանեայց Եկեղեցւոյ տարեգրութեանց մէջ այս օրը նշանակալից թուական մը սահմանուած է ըլլալու: Նոր անկիւնադարձ մըն է այս և երազներու իրականացման օրը: Մեր հայեացքը դէպի վեր՝ գեղեցիկ ապագայի մը խոսքով մնալից տեսլականը սեւեռելու օրն է:

Այս առիթով ամենայն համեստութեամբ կրնանք ըսել միայն՝ «Փառք քեզ, Տէր», որ առաջնորդեցիր մեզ՝ հասնելու այս օրը: Փառք քեզ, Տէր, որ ներշնչեցիր սրտերը Զու ծառաներուդ, Հայկ և Էլզա Տիպիգեաններուն, ստանձնելու համար այս բարեսլաշու բարեգործութիւնը: Փառք քեզ, Տէր, որ մեր նախորդներուն պարգեւեցիր տեսլականը՝ հաստատելու համար ընծայարան մը Ամերիկայի մէջ, և տուիր մեզի այս առիթը՝ իրականացնելու համար այդ ընծայարանի կարելիութիւնները՝ նորահաստատ «Տ.Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ին միջոցաւ:

Անտարակոյս, այս հսկայ նոր կեդրոնը սեմը պիտի հանդիսանայ փայլուն և փառաւոր ապագայի մը: Բայց ես կ'ուզեմ վայրկեան մը վերակոչել անցեալը: Ս. Ներսէս Ընծայարանը սկսաւ իր կեանքը քառասուններկու տարի առաջ՝ շնորհիւ Տ. Տիրան արքեպս. Ներսոյեանի տեսլականին և մի քանի խիզախ անձերու վճռականութեան:

Նախ բան այս ընծայարանի հաստատումը՝ Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցին հին աշխարհի մէջ պատրաստուած մարդկային դրամագլուխը սպառող դերին մէջ եղած էր ընդհանրապէս, և Տիրան Սրբազան լաւ գիտէր այս պարագան: Սակայն Տիրան Սրբազանին խիզախ տեսլականը այն եղած էր, որ այս գաղութը օր մը ծաղկէր և դառնար արտադրող, այսինքն՝ աշխարհի տարածքին Հայաստանեայց Եկեղեցւոյ առաքելութեան վարահելի կերպով ստարտող ոյժ մը, որ իր բաժինը կ'աւարտէր զօրացնելու համար հայրենիքի մէջ և այլուրեք գտնուող հոգեւոր մեծ հաստատութիւնները:

Այս եղած է տեսլականը Սուրբ Ներսէսի նկատմամբ, զոր ջանացած ենք իրականացնել: Զանազան ենք նաեւ ընդլայնել զայն: Եւ այժմ, «Տ.Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական

Կեդրոն»ին միջոցաւ իրաւամբ պիտի կարենանք իրականացնել այս փետականը՝ յօգուտ մեր բովանդակ Եկեղեցւոյ եւ ժողովուրդին և առանց չափազանցութեան կ'ըսեմ, թէ առանց Ս. Ներսէս Ընծայարանի չկայ երկարաւիւր ապագայ մը Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ համար:

Այս մտահոգութեամբ՝ իմ առաջնորդական գործունէութեանս առաջին օրերէն սկսեալ ջանացած եմ քաջալերել եւ ստարաւ հանդիսանալ ընծայարանին եւ ընդլայնել անոր նկարմամբ փետականը: Մեր գլխաւոր նպատակը եղած է զարգացնել զայն՝ անշուշտ շինարարական մարզի մէջ, եւ մանաւանդ բարձրացնել անոր ակադեմական մակարդակը եւ մարչելի դարձնել ուսուցումը նիւթերը ուսանողներուն: Սոյն ջանքերուն որպէս արդիւնք՝ հպարտ եմ յայտարարելու, թէ Ս. Ներսէս Ընծայարանը՝ իր պարամութեան մէջ առաջին անգամ ըլլալով՝ այժմ ունի երեք լրիւ ժամանակով գործող ուսուցչապետներ: Ուսուցչական կազմի իւրաքանչիւր անդամ մասնագէտ է հայկական քրիստոնէական մշակոյթի ժառանգութեան, եւ ունի իր մասնայարուկ ճիւղը՝ ծիսագիտութիւն, աստուածաբանութիւն, գրաբար եւ աշխարհաբար: Ուսուցչութիւնը բարձրացուցած է դպրոցի ակադեմական մակարդակը յօգուտ ներկայ եւ ապագայ ուսանողութեան:

Որեւէ օր ընծայարան այցելել կը նշանակէ մուտք գործել աշխոյժ հոգեւոր եւ մտաւորական ուսումնական աշխարհէ մը ներս: Յառաջիկայ տարիներուն ականապես պիտի ըլլանք ընծայարանի համար նոր ուսանողներ գտնելու աշխատանքի ընդլայնման: Զարգացման այս հանգրուանին՝ շուրջով պիտի ունենանք «Տ.Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ը, որ պիտի տարածէ ընծայարանի փետականին սահմանները աւելի հեռուները:

Այսօրեղ՝ նորահաստար «Տ.Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ին մէջ դասախօսութեանց եւ դասընթացներու միջոցաւ պիտի պարտաստուին Հայաստանեայց Եկեղեցւոյ ապագայ ղեկավարները, հոգեւորական եւ աշխարհական: Այսօրեղ, ընծայարանի գրքերու մեծ հաւաքածոն, Տիրան արքեպս. Ներսիսեան Գրադարանը, պիտի գտնէ իր պարտաւոր եւ յարմար փեղը: Եւ այս նոր կեդրոնի դռներէն դուրս պիտի ելլեն քաջահմուտ սաներ՝ երթալու, տարածելու մեր Տիրոջ վարդապետութիւնը եւ մեր հինաւորեց Եկեղեցին ժամանակակից դարձնելու Նոր Աշխարհի կեանքին:

Ասիկա, ինչպէս որ Տիրա Տիրիգեան զգացական կերպով ըսաւ մեզի՝ մեր սիրելի հանգուցեալ Վեհափառին փետականն էր: Եւ այդ նպատակին նուիրեց ան իր կեանքի առաքելութեան մեծ մասը՝ հետազօտելու եւ սորվելու համար անցեալի դասերը, զանոնք ժամանակակից դարձնելու համար այսօրուան եւ այդպիսով զօրաւոր հիմքերը դնելու ապագային:

Ինչպէս որ ըսի, այս կեդրոնը յարմար յուշարձան մը պիտի ըլլայ Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսին: Իսկ Ս. Ներսէս Ընծայարանի ընդլայնումը յարմար փուրք մըն է Տիրան արքեպս. Ներսիսեանի յիշատակին: Այս երկու հոգեւորականները Հայաստանեայց Եկեղեցւոյ 20-րդ դարու հսկաներէն էին: Որքան զեղեցիկ երեւոյթ է, որ անոնց ներշնչիչ յիշատակը այսպիսի յանձնական յուշակոթողի մը մէջ ամփոփուի:

Այլ երեւոյթ մը կայ գոր թէ՛ Վեհափառը եւ թէ՛ Տիրան Սրբազան շար կարեւոր կը նկատուին, եւ այդ է մեր կապը մեր հաւաքի կեդրոնին հետ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ: Հպարտ եմ ըսելու թէ սկիզբէն իսկ Ս. Էջմիածնի հետ զօրաւոր կապը կարեւոր մասը հանդիսացած է Ս. Ներսէսի նկարմամբ մեր փետականին: Եւ մենք յառաջիկայ տարիներուն

կը նախապես ենթադրուի զօրաւոր կապեր Մայր Աթոռի եւ հայկական ուսմանց միւս կեդրոններուն հետ:

Ի վերջոյ կ'ուզեն յիշել անգամ մը եւս, թէ մեր այս լաւարեսուցիները եւ յառաջդիմութիւնը իրենց լրման պիտի հասնին շնորհիւ Տիպիգեաններուն:

Հայկ եւ Էլզա ոչ միայն մեծահոգի բարերարներն են «Տ.Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ին - գոր անոնք իրականացուցին Հայկին ծնողաց, Յակոբ եւ Խնկաբեր Տիպիգեաններու, յիշարակին - այլեւ Ս. Յակոբ մարտիրոսին, ի յիշարակ Հայկի սիրեցեալ հոր Յակոբին:

Տիպիգեանները շարք համեստ են իրենց կարարածին նկատմամբ բան մը ըսելու, բայց եւս կը կարծեն թէ կարեւոր է որ մեր բովանդակ թեմը գիտնայ անոնց բարեգործութեան մեծութիւնը: Հայկ եւ Էլզա նուիրած են 1.6 միլիոն փողար՝ կառուցելու համար «Տ.Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ը:

Ս. Յակոբ Մարտիրոսի շինութեան համար Հայկին եւ Էլզային միացած են Հայկին երեք բոյրերուն (Տիգրանուհի, Մէլրի եւ Անգինէ) ընտանիքները, երկու եղբայրներուն (Մեղրակ եւ Նուպար) ընտանիքները, դուստրը՝ Մարիլ, եւ որդիները՝ Յակոբ եւ Քրիստափոր: Այս ընտանիքները միաբեր նուիրած են 800,000 փողար՝ կառուցել փալու համար նոր մարտիրոս, նուիրարարութեան ընդհանուր գումարը բարձրացնելով 2.4 միլիոն փողարի:

Հայկ եւ Էլզա, շնորհակալ ենք: Աստուած օրհնէ զձեզ եւ Տէրը միշտ պահապան ըլլայ ձեզի եւ ձեր ընտանիքին՝ պարգեւելով բիւր բարիքներ ձեր կեանքի օրերուն:

Ինչպէս որ ըսի խօսքիս սկիզբը, Հայաստանեայց Եկեղեցւոյ փարեգործութեանց մէջ նշանակալից թուական մըն է այս օրը: Շնորհակալ ենք ձեր բոլորէն որ զայն բաժնեցիք մեզի հետ: Շնորհակալ ենք նաեւ Ն. Դանիէլէն եւ Ս. Ներսէսի ուսուցչական կազմէն անոնց ջերմ հիւրասիրութեան համար այսօր:

Իսկ այժմ, խիզախութեան, սիրոյ եւ բարեգործութեան այս հիմքերուն վրայ սկիզբ կ'առնէ մեր ապագան կերտելու աշխատանքը: Թող մեր անցեալի մեծ դէմքերը դիպեն մեր գործերը հպարտութեամբ եւ հաճոյքով: Եւ թող Տէրը մեր բոլորին հետ ըլլայ, մեր կողքին, մեր սրտերուն մէջ, մինչ մենք կը պարտաստուինք յօգուտ բովանդակ հայութեան եւ ի փառս Աստուծոյ մեր երթին»:

«Տ.Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ը եւ Ս. Յակոբ Մարտիրոսը պարտաստ պիտի ըլլան 2005 թուականի վերջերը:

* * *

Ի պարիս Տէր եւ Տիպիգեան Հայկ եւ Էլզա Տիպիգեան բարերար ամուսին, Ուրբաթ, Յունիս 11-ի երեկոյեան, առաջնորդ Գերշ. Տ. Նաժակ արքեպս. Պարսամեան կազմակերպել էր ընդունելութիւն մը, որ փեղի ունեցաւ Առաջնորդարանի գեղեցկօրէն զարդարուած Հայկ եւ Ալիս Գալուքեան հանդիսատեսին մէջ: Ծաշկերոյթի պարասխանատուներն էին Տոքթ. եւ Տիպիգեան Բաժնիքի եւ Շողակ Յովհաննէսեաներ:

Օրուան հանդիսավարն էր Ս. Ներսէս Ընծայարանի Խնամակալութեան անդամ Տոքթ. Բաֆֆի Յովհաննէսեան, որ գնահատեց Տիպիզեան ընտանիքի առաքանքնութիւնը և առիթ տուաւ որպէսզի կարգ մը ազգայիններ իրենց սրբի խօսքը ըսեն:

Տոքթ. Յարութիւն Մխճեան իր խօսքին մէջ ըսաւ. «Երբ Հայկը եւ Էլզան մէկը սիրեն՝ անոնց սէրը սահման չի ճանչնար: Գարեգին Ա. Վեհափառին հանդէպ անոնց սէրը առասպելական էր: Անոր հիւանդութեան օրերուն՝ անոնք փոխադրուեցան Նիւ Եորք Վեհափառին մօտ գրնուելու համար: Զարմանալի չէ որ անոնք որոշած են անմահացնել մեր սիրելի Կաթողիկոսին յիշատակը»:

Ս. Ներսէս Ընծայարանի վարիչ Նոգշ. Տ. Դանիէլ վրդ. Ֆրնսրըքեան գնահատել է երբ Տիպիզեաններու այս նախաձեռնութիւնը, ըսաւ. «Հայ Եկեղեցին ունի երկու գլխաւոր սիւներ, որոնց վրայ կը հանգչին մեր ինքնութիւնը եւ ապագան: Մեր ապագան կախում ունի մեր հաւաքէն: Երկրորդ՝ կախում ունի մեր ծնողներուն, մեծ ծնողներուն եւ նախահայրերուն հաւաքէն ու աւանդութիւնները սորվելէն եւ ուսումնասիրելէն: Յաւելալ Կրեղի կարիքը կար Ս. Ներսէս Ընծայարանին մէջ, նկատի ունենալով որ այս Մեպարեմբերին 12 ուսանողներ պիտի ունենանք, եւ որոնք պիտի պարտաստուին ընդգրկուելու եկեղեցական ասպարէզը: Երջանկայիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսի Կրեղի իրականութեան ճամբուն մէջ է. պարտաստել գիտակից, կարող եւ հաւատացեալ եկեղեցականներ՝ առաջնորդելու համար Հայ Եկեղեցին եւ հաւատացեալները»:

Բարերար Տիար Հայկ Տիպիզեան ի մէջ այլոց ըսաւ. «Հայ Եկեղեցին հայ ժողովուրդը միացնող ամենագորաւոր ուժն է: Ապագայ սերունդին համար այս կեդրոնը անհրաժեշտութիւն մըն է, եւ ոչ թէ պերճանք: Վեհափառին փափաքը իրականացնելը պարտի մը եւ սիրոյ արտայայտութիւն մըն է: Մենք վստահ ենք որ Վեհափառին յիշատակը պիտի յաւերժանայ իր գործերով եւ այս կեդրոնով»:

Տիար Գեորգ Յովնանեան իր կարգին ըսաւ. «Հայկը փաստեց որ հարազատ բարեկամ մըն էր Վեհափառին, որովհետեւ ինչ որ մարդկայնօրէն կարելի էր ըրաւ որպէսզի մարդիկ ջմռնան զայն: Մենք կը հաւատանք որ 1700 տարի շարունակ Եկեղեցին եղած է մեր խաւիսիւր, եւ շատ կարեւոր է որ զօրաւոր Եկեղեցի մը ունենանք: Զօրաւոր Եկեղեցի մը ունենալու համար՝ պէտք է ունենանք զարգացած եւ կարող եկեղեցականներ»:

«Հայ եկեղեցականներու պարտաստութիւնը կարեւոր է Հայ Եկեղեցոյ ապագային համար: Այս իշխանական նուէրը միջոց մըն է իրականացնելու այդ ծրագիրը», ըսաւ Տիար Յակոբ Գույումճեան:

Ընդունելութեան աւարտին՝ առաջնորդ Սրբազան Հայրը Տիպիզեան ամուլին շնորհեց «Ս. Վարդան» յուշամետալը՝ ի գնահատութիւն անոնց նուիրումին եւ առաքանքն նուիրաւորութեան, եւ կարարեց փակման խօսքն ու աղօթքը:

ԴԻԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ